


مسند (مسیس) غز تسی ادارہ خاتمه
Համակ կամ որ եւ իցէ գրուծին պէտք ուղղի
Առ խմբագրութիւն
ՄԱՍԻՍ ՕՐԱԳՐՈՑ
Գ. ՊԱՆՈՒ ՊԱՆՈՒՄ, Համակ Բաշա խան
Օսմ. Նախկին Պարսկայի փողոց, Թիւ 2
Direction du Journal "MASSIS",
Galata, CONSTANTINOPLE
Les annonces sont reçues
aux Bureaux du journal



ԼՐԱԳԻՐ

10 ՓԱՐԱ

ԱՂԳԱՅԻՆ ԲԱՆԱԲԱՆԱՆ ԲԱՆԱԲԱՆԱՆ ԵՔ ՏԵՏԵԱՆԿԱՆ 10 ՓԱՐԱ

10 ՓԱՐԱ

ԳԻՒԼԱՏՆՏԵՍՈՒԹԻՒՆԸ Ս. ՓՐԳՉԻ ՈՐԲԱՆՈՑԻՆ ՄԵՋ

Ս. Փրկի որբանոցը խնամակալութիւն մ'ունի, տիկիններու խնամակալութիւնն զատ, Հիւանդանոցի հոգաբարձութիւնը հիմա կուգէ որբանոցի բնոյն անոնց ուսերուն վրայ դնելու Այդ խնամակալութիւնը աշխատութիւնն չէ որ կը փախչի, բայց անոր մէջ անդամներ կան որ իրենց ստանձնած պարտականութեան գիտակցութիւնն ունին, ու կուգին որբերուն չօշափելի ծառայութիւն մը մատուցանելու:

Ինչ պիտի ըլլայ արդեօք այդ ծառայութիւնը: — Որբերուն նիւթական ապագայ մը ապահովել:

Ինչ կը սովորեցնեն, ընդհանրապէս այդ խնդրերուն: — այն ուսումները զոր թաղային վարժարաններու մէջ կը սովորեցնեն քաղաքացիի զանախորհրդուն: Այնպէս որ մեր մէջ հարուստ քաղաքացիի տղան, արհեստավարի տղան և որբը — որբուն ապագան ապահովուած չէ — միեւնոյն ուսումը կառնեն:

Այդ խնամակալութեան անդամներէն մէկը աղէկ կըցած է դիտել որ շրջանը աւարտելու ժամանակը կուգայ, այդ չափահաս որբ տղաները կըսկին տնային: Իրենց դէմքը մտաւանդութիւն ու անձկութիւններուն: Այնպէս որ մեր մէջ հարուստ քաղաքացիի տղան, արհեստավարի տղան և որբը — որբուն ապագան ապահովուած չէ — միեւնոյն ուսումը կառնեն:

Մենք ուրիշ անգամ առիթ պիտի ունենանք ծանրանալու այն սխալ կըրթական ծրագրերուն վրայ, այն սխալ աւանդորդներուն վրայ որով մինչև հիմա մեր դաստիարակութեան ճակատագրերը վարեցին: Ամենքն աւելի բնականացած են ու տրամաբանութեան յարած այդ մտքերը, բնական ու դասական գիտութեանց առջև բոլորովին դատապարտելի այդ երկու անհիմն մտածումներու մէջ մտորած է: Ինչ ալ քաջընթաց իրենց ետեւէն: Ու դեռ այսօր ալ դժգոհաբար միեւնոյն դադարաւորութիւնով տողորդուած անձերն են որ կը վարեն մեր կրթութեան ճակատագրերը: Միայն թէ առ բարեբաղդութիւնը կայ որ հեռավար դաստիարակները իրենց ուղածին պէս կերպով առանց կեդրոնին ազդեցութիւնը ուղղակի կըկու: Բայց առիթ գոյժատ մը չէ մեր դասական դպրոցներուն ալ, որոնց մէջ նորնայն բնականացութիւնը և ոչ—իրական կարգ մը ուսումներ կը տիրապետեն դաստիարակութեան մակարդակին վրայ: Մեր ընդհանուր դաստիարակութեան այս ամբողջ վատառողջ ու շրջապատը չենք հիմնուած է կարգ մը դարգէտներու հիւանդ գաղափարներուն և մանաւանդ հիւանդ երեակայութեանը վրայ, որով այնքան խանգարուած է մեր դաստիարակութեան ճակատը: Այսպէս, հիւանդ երեակայութեան տէր կը պատկերաստուին մեր որբերն ալ որբանոցներու մէջ: անոնցմէ ալ անխափ կեանքը անորոշներու, բանաստեղծներու խումբ մը կունենանք, որ չեն յարժիր, քրտնք չեն թափեր, բայց մակարոյթի մը պէս

մեր մարմնէն կը սնանին, և իրենց մըտալին հիւանդութիւններն ալ մեր նորածին առողջ սերունդներուն կը փոխանցեն:

Է՛հ, հերիք է այս: Մեղի պէտք եղածը առողջ մարդն է, որ իր գորակող բազուկներով հողը մշակէ, կենդանիները սնուցանէ, արեւին տակ իր մորթը սնանայ, հողին մէջ իր ձեռքերը կտնտանան: Հերիք այդ հիւանդ ու այլասեռած (degenerate) երիտասարդութիւնը հասցնենք: Մշակ պատրաստելու է:

Որբանոցի խնամակալութիւնը որ առայժմ դոնէ հաւարուծութեան, կոլտնտեսութեան ու պանրակութեան դործնական դասեր հաստատելու նպատակ ունի, լաւ կընէ որ իր չէնքը ապագամբի վրայ հիմնէ: Այսինքն, հիւանդանոցի հոգաբարձութեանն ամապական սալափ, որը դուրսը մը պահանջէ և բացարձակապէս իր արամագրութեանը տակ ունենայ զայն: Առանց այդ նիւթական յնարանին հոգաբարձութեան բոլոր խոստումները օգտին են ու մենք չենք կրնար չօշափելի արդիւնքի մը սպասել: Այս, խնամակալութիւնը կրնայ հաղորթի ուրիշ աղբիւրներ ալ փնտռել, օրինակ որբերը որդեգրել տալ, սակայն ամէնէն առաջ հոգաբարձութիւնը պէտք է փնտռէ զանախորհրդուն: Գիւղատնտեսութեան ուսուցիչը մանաւանդ որ պատրաստ ալ է, ալ լայն, մատաղը պէտք է: Այս օրուան հոգաբարձութիւնը հիւանդանոցի պատմութեան մէջ ամէնէն փառաւոր դերակը բացած կըլլայ, եթէ այս կերպով որբերու ապագան նիւթական ապահովուէ:

ՄԵՐ ԳԱՆԱՌԱՅԻՆ ՎԱՐՔԱՊԵՏՆԵՐՈՒՆ

Ո՛ր և է գաւառի մէջ ընդհանուր առումով դաստիարակութեան սխալ ընթացքը մասնաւոր ընել կարծեմ անօգուտ չլլար, վասն զի փորձառական դաս մը պիտի ըլլայ այն մեր բոլոր, մանաւանդ գաւառացի ուսուցիչներուն, որք զլուստարար անգիտակ տեղային պէտքերու, կան որ օտարազգի հեղինակներով կուգին սնանելու և չեն կրնար մարտնչել, կան ալ որ բնական ուսման ալ սովորած (routinier) կը լինին: Այս վերջինք, ցաւ է ըսել, մեծամասնութիւն կը կազմեն:

Շատ իրաւամբ ուրեմն պիտի պահանջենք մէկ կողմէ որ մեր բոլոր ուսուցիչը հողեբաններ ըլլան, զի առանց հողեբանութեան՝ մանկավարժութիւն չկայ: Բայց սպասելով հանդերձ որ անոնք հասնին բազմացաւ իտեպին, առ այժմ աւելորդ չեմ նկատեր փորձառական մի ճամբարութիւն մեր գաւառացի ուսուցիչներու ու շաղթութեան յանձնել:

Գացէք գաւառական բաղադրներ, ուր չըջանաւորտ աշակերտներ եթէ կան, աւելեքն ալ շատ ինչ բացառութեամբ, դժգոհ են ու դանդաղակող միջավայրին դէմ անգործ կը մնան, իրր թէ զարգացեալներու յարմար գործ չկենան:

Ատարագար ալ կան արդարեւ մաս մը անգործ երիտասարդներ և մեծ մասը՝ իրենց արդէն ունեցած գործերէն դժգոհ, որք սակայն ունին կամ կրնան տրամադրութեան տակ ունենալ հող, արտ՝ ուր իրեք աշխատել անպատուութիւն կը նշկատեն:

Բահը ուսը առած, կամ պատուատի նշարակ ի ձեռին թթառանքները երթալ կոչտ գործ է: Գեւեհիկ է այն, այսպէս

խորհողները ցաւ է ըսել, տակաւին կան, որք կը ծիծաղեն... կը հեղեն, և թէ համարձակեալ այդպիսի գործեր առաջարկել իրենց: Այս մասին Պարսկական թող դաս առնէ Ատաբազարի կարգիչը բազուկներով, լայնել իրանով, քաջող երկաթգործին աղի՛ր՝ վարժապետի մը առջև օտար լեզուով մի բանի բանի թոթովել սովորած՝ կամ գրական, պատմական ընկեր մը ծանօթութիւն առած ըլլալուն համար, չուզեր ձեռարկուիտ մը սովորել... ո՛չ, գեւեհիկ կը համարի արհեստները, իրեն պէտք եղածը արհեստ չէ, այլ գեղարուեստ... Ինչո՞ւ:

Կան ալ որ հակառակ այս առաջիններու, թէ՛ն հրու հետեւողներ ծնողաց, գեւեհիկ արհեստներու ձեռնամուկ կըլլան, այլ սակայն ոչինչով կը տարբերին իրենց զպոքը չտեսած արհեստակիցներէն, մտքի սրտի ու զգացման տեսակէտով: Ինչո՞ւ է: Եւ ընտելեան գաւազ՝ աշխատասէր ու գործունեայ հոգաբարձ ծնողներ՝ այսպիսով, փոխանակ սերելու պարզ և ուսում... պիտի գայ որ մը, — ալ որ շատ հեռու չէ Ատաբազարի համար, — որ պիտի խաշին դպրոցէն ալ, ուսումնէն ալ ու իրենց տղաքը առաջին օրէն իսկ պիտի յանձնեն հողին կամ գութնի՛ն արհեստներուն... Ինչո՞ւ:

Այս բոլոր պարագաներուն մէջ թէ ո՞վ պիտի ըլլայ տուժողը, հարկ չկայ ըսել: Այս շարեաց դարման տանիլ գաւառացի ուսուցիչներու ձեռքն է, այդ առթիւ կոծ շուտ կընեմ իրենց մարդասիրական ու կրթութեան զգացումներուն որ շատ լըծուին ի նկատի առնեն ամէն տեղ այս էնչո՞ւն:

Թէ՛ն այս կարեւոր խնդիրը որոշելու հետեւ, ձեռն առնալ մասերու բաժնուած կերելի, այլ սակայն մի է, և այն ալ արդիւնք ուսուցիչներու տղիտութեան ու անձեռնկատութեան:

Ուսուցիչներու պարտականութիւնն է յաւէտ սիրոյն աշակերտին, բնութիւնն ու հոգը՝ որոնց կապուած է և պիտի լինի միշտ մարդկային կեանքը ուսուցանելի՝ և գաւառականներու գեղեցկութիւնը և կեանքի հաճոյքը ձեռքի ու մտքի աշխատութեան մէջ փնտռել տալ: Մէկ բառով արթնցնել անոր մէջ ճշմարիտ գեղեցկին և աշխատութեան սէրը, որով միայն պիտի ազնուանայ անոր սիրտը, թուիլ պիտի առնէ անոր իմացականութիւնը և պիտի փառի եւ լուսնոտ կերպի հողի կեանքին, իր ծրնորներու գութնակներն ու արօրին:

Ա. Մ. ԿԵՆՃԵԱՆ

ՏՊԱՆՈՐՈՒԹԻՒՆԵՐ

(ՄԻՒԼԻԹ ՊԱՂՁԵՍԻՆ)

Կ... Ին

Մեր երեկուան կերակին հիւանդի՛ն և գաւ. թէ՛ն Ա. Գիւրը կերակին հանգստի օր մը անուանած է, սակայն հոս, Սեւեհիկ մէջ, հայերու համար յարմարեալ, թափախ, թղթախաղի առատ ժամեր պարգեւիլ օր մըն է:

Եւ՛ ընտելեան, խոտի և հոտի, ծառի ու ծիծառի, ծովի ու հովի ծայրայեղ սիրահար մը՝ բաղադրին ծխողին հետեւ՝ բնութեան լռին բանաստեղծութիւնն ամբողջովին ներգրաւ համար Միլլէն՝ պաղիտալի գաղի, ծովահայաց է և սաղարթախաղ ծառերուն խոտի թնկերին կապուած չէ կարելի նշմարել: Բնութիւնն հոտ առատութեան ջուր կը փսխէ, պիտի ըսելի, գանապան ձեռքերու տակ, հոս արարմըն է որ միմիայեան շարժուածի մը պահուստի անտրոնի տարօրինակ կերպով բաց է ծուռ՝ իր աւանդական լեռնային զոռապիտան շարունակ ջուր — մուռ — դուրս կուտայ:

Ինչ մը անդին, չորս ծառերու շուրջն առնալ, կտրիկ աւազան մը կայ, ուր կասկարմիր ձուկեր 7—8 տարեկան տղաներու կէտէն թափառելու փորձերն մէկ հատիկին ետեւէն խմորին կը վազեն:

Հոն, ատունցմէ ոչ այնքան շատ հեռի, նշանաւոր է արուեստական ջուրէ ծառերուն ծիւղերը ծագողար են և առաստաղի մը չափ հաստ և որ իւրաքանչիւր երկվայրկեան կը փչի պիտի փչի կարծես, միշտ կը պտուտիլ այդ ծառն օդին մէջ, մէկ ծիւղը միւսին կը հալածէ և այս տեսարանին հանդէպ հրեւեհներու սիրուն խմբիկ մը ապշած, ատիւ, կէ՛ կըզա, կը մըլտան իրարու:

Արուեստական ջուրէ ծառ ըսի. ճնշողական զօրութիւնը իր գերը խաղացած է հոս: Թիկեղէ բարակ խողովակներէ ուժով փչի կը ցայտէ ջուրը և որովհետեւ նախապէս խողովակը զարարած են, բնական է որ ճնշուած ջուրը նոյն օճաղաբ ձեւով բարձրանայ վեր: Է՛ սակայն, բնականութեան դաս չէ կարծեմ կարգացածնիւ:

Ու այսօր, ինչ հիւանդի գուգաղիպութիւն, Պուլկարներու աղբ, ասոր պիտի տօնեն երկր այս լռին ու խորհրդաւոր ու մոգական պարտէզին մէջ, այդ օրը իրենց գրեւը դիտելին օրն է. Պուլկարները կէս օրին հացկերով մը տունէն — ցնձայ 8 ժող և հրամանէ՛, Կոստօթիլի՛, դարձու՛ տալ թէ՛ն, Կարա՛ն, հրամանէ՛ք:

Երեք հարիւրէ աւելի անձեր, ամէն աղբէ և սեռէ, խուռուած են և պարտիլին համայն տեսքէ՛ն՝ չիմած՝ դու գիւնդներու թիւը շատ է: Ես որ ժամանակէ մի փեր գիւնդով աղայ մի՛նք դարձած, շատ անգամներ առանց օդի կամ դարձելու աղբեցութիւնը գոյութիւն ունենալու, այդ օրը ես ալ մասնակցեցայ պուլկարներու հօտառին... Երեւակայութիւնով:

Սեւային խորի չկայ. ամէն ոք ազատ է իր աչքը խածած տիկնիկին կամ օրերորդին ձեռքը բռնել և հօտային հսկայ շղթային օղակներէն մէկն ըլլալ: Գիւնդականութիւնները երբէ՛ք գոյութիւն չեն կրնար ունենալ, վասն զի մարդերու սրտին մէջ:

Յատկապէս շինուած շէնքի մը տակ, որ պարտէզին մէջտեղը ծառ ու ծաղիկի առատութեան մը մէջ կառուցուած է, Խալահանէ՛ն ծառ, դպրոցին աշակերտները նուագեցին տակ սիրուն և շատ հիւանդի ներդաշնակութիւնով, 8—12 տարեկան՝ 25 հոգի բաղադրած այդ խումբը ամէնօրէն ալ ծաղիկաբուսութեան արժանացաւ: Իրենց երաժշտութեան դասաւանդ, իտալացի բարի աղջկայը ծերուկ մը, թեւ միայն չուներ օր թուր այդ օր:

Բոլոր հանդիսականներն ալ գոհ մնացին և խնդրեցին որ հօտային պարը զարեն: Կարին սկսիլը ծաղիկով ողջունուեցաւ և, երեսակցեցէ 40—50 անձեր բաղադրած հսկայ շղթայ մըն է սկսալ դառնալ պարտէզին կանաչին վրայ: Մեծ շղթայէն ներս, զատ, պղտիկ շղթայ մը կազմող երիտասարդները որք շատ զուարթ ըլլալ կը թուէին, մանաւոր ուշադրութիւն դառնեցին իրենց գլուխի, մէջքի եւ ծունկի ըրած ամենատարբեր կոտորուկներով, և հօտային աւարտելին վերջն իսկ շարունակ հինգ վայրկեան պուլկարներու և պուլկարներին խառն ծաղիկաբուսութիւնները ձայն տարին տունին ծովին ու հովին:

Բերե՛ք ինձ, բերե՛ք — Հրեւեհներն ինձ բերե՛ք, — Տուէ՛ք ինձ մոռնալ — Վիտերն անտեղի... — Խնդրեմ, վարկեա՛ն մ'ալ — Ու յետոյ լիդի — Իրական անդոյթ — Կրնայ գալ չէ՛ փոյթ:

Ինչպէս երգած էք ձեր երգերէն մէկին ՅԱՐՈՒԹԻՒՆ

Սեւեհիկ, 12/24 Մայիս 97

ԲԱՃԱՆՈՐՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Գ. Պաղտի համար ծառերուն դնին. արծ... 75	
Վեցամետայ » » » » 40	
Գաւառներու » ծառերուն » » » 100	
» » Վեցամետայ » » » 50	
» » Նոսմետայ » » » 25	
Օտար երկրի » ծառերուն » ֆրանք » 25	
Ռուսիոյ » » » » 10	

Գրամի փոխարէն փոսթայի փող կընդունի: 115
ընդլի փողը 100 ընդլի հաշուով:

ԲԱՆԱԲԱՆԱՆ

ՅՈՒՆԱՍՏԱՆ. — Գոհած առանց կոստանդին իշխանը ի մօտոյ Լոնտոն պիտի մեկնի թագուհւոյն Յորեյնսին ներկայ ըլլալու համար: Միջոյն ուղղակի նա պիտի նստի Պրէնտիգի երթալու համար, ուրիշ պիտի շարունակէ իր ճամբորդութիւնը դէպ ի Լոնտոն:

Հակառակ իրաց արդի վիճակին անստուտութեան, առաջիկայ ընտրութեանց վրայ սկսած են այժմէն հոգ տանել: Խորհրդաբանին մէջ կառավարութեան յայտնի կուտակեցները 30—32 հոգի են: Նախարարները կը ջանան բաժանուած ձգել Տէլեֆանի կուտակեցութեան մէջ՝ խորհրդարանը լուծելու համար: Այսու հանգրձն ընդհանուր կարծիքը սա՛ է թէ Բալլիի կուտակեցութիւնը նոր յարգներ չպիտի ունենայ: Նոյն իսկ կը կարծուի թէ Մ. Մ. Մէլլորուայ, Բեդրուայի և Մանէսիս չեն ծածկեր իրենց սաստիկ դժգոհութիւնը: Գալով Թիւրքուքիսանց, կերելի թէ անոնք որոշած են վերակազմուիլ ներքին գործոց արդի նախարար Մ. Թէֆեթիսի առաջնորդութեամբ: Նորակազմ Տէլեֆիի կուտակեցութիւնը առ այժմ տասներ հինգ անգամ ունի, բայց հետզհետեւ բանի մը Տէլեֆանացի համակրութիւնը կը վաստիկ իր խոստացած բարենորոգութեանց համար: Տէլեֆանեան կուտակեցութիւնը միշտ մեծամասնութիւն կը կազմէ հակառակ զորոյցի մը՝ որուն համաձայն իրր թէ երեսուցի չափ անգամներ զինքը լրաց ըլլալու վերջին զանգին մէջ ծովային գործոց նախարար Մ. Լէվիտիս կերելի թէ վերջնականապէս դժգոհած է Մ. Տէլեֆանի հետ: Նախորդ նախարար պետը միշտ կապուէ խորհրդարանին գլուխամաս, կարծելով թէ կառավարութիւնը պիտի ներկայանայ ժողովին ընտրականութեան առջև: Կըսուի թէ Տէլեֆանի երջօրորդին և խորհրդարանին նախագահ Մ. Ջայիլիս ապագայ կուտակեցութեան մը պետ պիտի ըլլայ, եթէ Մ. Տէլեֆանի չկրնայ մեծամասնութիւն մը ձեռնացնի:

Ծառաթ օր իրիկուան ժամը 6 1/2ին, թագաւորը Ռուսիոյ դեսպանատունը գնաց ուր երկու ժամուան տեսուցութիւն մուտնեցաւ Մ. Օնուրի հետ: Թագաւորը ռուսական ծովակալի պարզ համազգեստով էր: Թագաւորային պահագան ղեկավարութիւնը որ առժամանակայ կիրառով ոտի կանուխան պաշտոն կը վարէր՝ շնորհեցաւ — Ժողով և Կոստանդին իշխանները՝ երկու եղբայր տեսուցութիւն մ'ունեցան: Ժողովը ընդհանուր բանակետին մէջ, Ֆրանսայի Աթէնքի զեպանատան ղեկավարական կցորդ Պառնոս տը Վիտեֆէն, որ Տոմարոյի ճակատամարտէն վերջ Աթէնքը դարձած էր, Գահաճառանքին բանակաւորը վերադարձաւ: Հելլէն բանակին կացութեան վրայ իրեն խորհրդը հարցունելով, ըսաւ թէ պէտք է հեծկազմը շատցնել: Գահաճառանք իշխանին սպայակոչարին նախորդ պետ Մարուստաքիս զնդապետ տեղեկագիր մը կը պատրաստէ թէ ինչ պատճառներ կային Լաթիան պարպելու համար: — Հոռով մէջ Յունաստանի ներկայացուցիչը շատ յուզուած չկենարով հեռագիր մը դրկեց հանգուցեալ Ֆրանի երեսփոխանին քրոջ: — Հելլէն կառավարութիւնը Աթէնքի ռուսական ներկայացուցիչին դիմում ըրաւ հասկնալու համար թէ ինչու Ռուսմանիա արգիլեց իր երկրին մուտքը բանի մը հելլէն պահեստիներուն: — Աթէնքի Ֆրանսական ներկայացուցիչ Մ. Պառնոս Աթէնքի թագաւորապետին յանձնեց Ֆրանսայէն զրկուած 800 ֆր. ը վերաւորներուն և անոնց ընտանեաց համար:

ԿՐԵՏԷ. — Մովակալը անցեալ կիրակի օր շրջաբերական մը պիտի ուղղէին կրտսեաց, կղզւոյն նոր կազմակերպութեան մասին:

Հոգաբարձութիւնն իւրն իր յարգէ քննադա-
տութիւնն, սակայն պէտք է որ իւր լինի
րդար. Պատռ. Քննադատան իւր Հասարակ-
էի մեր վարժապետիք լոկ ընթերցանութիւն
խոսն, և առկէց աւելի ոչինչ, ինչ որ բա-
րձապապէս հետիւ է ճշմարտութիւն, մեր
արժեսէիք նախկին չըլնաւարտներն են,
ի իսն է Մկրտչութեան վարժարաններն,
եթէ Պատռ. Քննադատան հաճէր նախա-
նն մեր Մանկական Պաշտօնի առօրեայ
պատիւանքներն ինչպէս քանիս չափն

